AM RU

# ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անձնական տվյալների մշակման քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) կարգավորում է իրավահարաբերությունները անձնական տվյալների մշակման ուղղությամբ **«ԲՐԵՅՆՍՔԻԼՍ» ՍՊԸ-ի**, ՀՎՀՀ 00235569, իրավաբանական հասցե՝ 0054, ՀՀ, ք.Երևան, Փիրումյաններ 4/3, գրասենյակ 12 (այսուհետ՝ Ընկերություն) և **lerna.am կայքի Օգտատիրոջ** միջև (այսուհետ՝ Օգտատեր):

«Օգտատեր»՝ 18 տարին լրացած ֆիզիկական անձ, ով ցանկանում է օգտվել Ընկերության ծառայություններից, թողնել մեկնաբանություն, գրանցվել կայքում կամ անել գործողություններ, որոնք նախատեսված են Ընկերության ինտերնետ-ռեսուրսի ֆունկցիոնալությամբ:

«Կայք» կամ «Ընկերության ինտերնետային ռեսուրս»՝ lerna.am հասցեով կայք՝ ներառյալ Ընկերությանը պատկանող դոմենային անունների բոլոր մակարդակները:

«Անձնական տվյալներ»՝ ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է ուղղակի կամ անուղղակիորեն նույնականացված ֆիզիկական անձին (քաղաքացուն):

«Անձնական տվյալների մշակում»՝ անձնական տվյալների մշակման հետ կապված ցանկացած գործողություն կամ գործողությունների շարք, որոնք կատարվում են ավտոմատիզացված գործիքների կիրառմամբ կամ առանց դրա:

Դրանք ներառում են՝ տեղակատվության ստացում, հավաքագրում, գրանցում, համակարգում, կուտակում, պահպանում, թարմացում կամ փոփոխություն, օգտագործում, արգելափակում, ջնջում, անձնական տվյալների ոչնչացում:

2. Սույն Քաղաքականությունը սահմանում է Կայքի օգտատերերի անձնական տվյալների մշակման կարգը, պայմաններն ու սկզբունքները, Օգտատերերի իրավունքները և Ընկերության պարտավորությունները, մշակված անձնական տվյալների պաշտպանության համար ձեռնարկվող միջոցները:

3. Սույն քաղաքականությունը վերաբերում է բոլոր անձնական տվյալներին, որոնք Ընկերությունը ստանում է Օգտատերերից:

4. Օգտատերը համաձայնում է սույն քաղաքականությանը՝ Կայքի հատուկ դաշտում մուտքագրելով իր անունը, հեռախոսահամարը և, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային փոստի հասցեն (էլ. փոստ) այն դաշտում, որտեղ թողնում է հայտ խորհրդատվության համար կամ ուղարկում է պատվերը կամ կատարում է Կայքի ֆունկցիոնալությամբ նախատեսված ցանկացած այլ գործողություն և սեղմում է «Ուղարկել» կամ «Դիմել խորհրդատվության համար» կամ հետադարձ կապ ենթադրող ցանկացած այլ կոճակի:

Քաղաքականության պայմանների հետ անհամաձայնության պարագայում Օգտատերը պետք է անմիջապես դադարեցնի Կայքի օգտագործումը:

5. Կայքի ֆունկցիոնալությունից օգտվելիս Օգտատերը կարող է Ընկերությանը տրամադրել հետևյալ անձնական տվյալները (անձնական տվյալների ցանկը և տեսակները կախված են Օգտատիրոջ կողմից օգտագործվող ինտերնետային ռեսուրսի հատուկ ֆունկցիոնալությունից՝ ազգանուն, անուն, էլ փոստի հասցե, կոնտակտային հեռախոսահամար, օգտատիրոջ նույնականացման տվյալներ (օգտատիրոջ ID):

6. Տրամադրելով իր անձնական տվյալները՝ Օգտատերը համաձայնում է Ընկերության կողմից դրանց մշակմանը (մինչև Օգտատիրոջ կողմից անձնական տվյալների մշակման իր համաձայնության հետկանչումը), ներառյալ հավաքագրումը, պահպանումը, ապաանձնավորումը, Ընկերության նախատեսած դեպքերում դրանց փոխանցմանը երրորդ անձանց, Օգտատիրոջը Ընկերության կողմից տեղեկատվական և գովազդային ինֆորմացիա տրամադրելուն և այլ ծառայությունների տրամադրմանը, որոնք նախատեսված են Կայքի ֆունկցիոնալ

հնարավորություններով և բոլոր այն դեպքերի համար, որոնք նախատեսված են սույն Քաղաքականության 8-րդ կետով:

Անձնական տվյալները մշակելիս Ընկերությունը ղեկավարվում է ՀՀ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 2015 թվականի հունիսի 13-ի թիվ ՅՐ-49 օրենքով՝ հաշվի առնելով 2016 թվականի ապրիլի 27-ի Եվրամիության ընդունած «Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի դրույթները» և տեղական մյուս նորմատիվ-իրավական ակտերը:

Անձնական տվյալների մշակման վերաբերյալ Օգտատիրոջ կողմից տրամադրված համաձայնությունը ուժի մեջ է այդ համաձայնության տրամադրման օրվանից մինչև մշակման նպատակներին հասնելը կամ Օգտատիրոջ կողմից այն չեղյալ հայտարարերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Օգտատերը կարող է ցանկացած պահի չեղարկել Ընկերությանը տրամադրված համաձայնությունը սույն Քաղաքականությամբ սահմանված կարգով:

7. Եթե Օգտատերը ցանկանում է ճշգրտել իր անձնական տվյալները այն դեպքում, երբ դրանք սխալ են կամ թերի կամ ցանկանում է հետ վերցնել իր համաձայնությունը անձնական տվյալների մշակման վերաբերյալ, նա պետք է պաշտոնական հարցում ուղարկի Ընկերության sales@lerna.team էլ հասցեին՝ «Պարզաբանել անձնական տվյալները» կամ «Դադարեցնել անձնական տվյալների մշակումը» վերնագրով: Նամակում պետք է նշել Օգտատիրոջ էլեկտրոնային հասցեն և համապատասխան պահանջը:

8. Ընկերությունն օգտագործում է Օգտատիրոջ տրամադրած տվյալները հետևյալ նպատակների համար՝

8.1. Կայքում Օգտատիրոջ գրանցման և նույնականացման համար՝ Օգտատիրոջը Կայքն ամբողջությամբ օգտագործելու հնարավորություն տալու համար

8.2. Օգտատիրոջ հետ հետագա հաղորդակցության պահպանման համար, ներառյալ երրորդ կողմերի, այսինքն Ընկերության գործընկերների ներգրավմամբ՝ Օգտատիրոջ հայտի հիման վրա Ընկերության պարտավորությունների կատարման նպատակով և Ընկերության մատուցած ծառայությունների մասին խորհրդատվության մատուցելու համար

8.3. Գործընկերների կայքերում Օգտատիրոջ անձնական հաշվի ստեղծման և մուտքի տվյալների տրամադրման նպատակով

8.4. տեղեկատվական հաղորդագրությունների ուղարկման նպատակով

8.5. գովազդային տեղեկատվություն տրամադրելու, Ընկերության ապրանքների ծառայությունների և նոր կարգավորումների մասին ինֆորմացիա տրամադրելու նպատակով

8.6. Ընկերության կայքի աշխատանքի մասին գնահատական և հետադարձ կապ ստանալու համար

8.7. գովազդի արդյունավետության վերլուծություն և վիճակագրական հետազոտություն իրականացնելու նպատակով՝ Օգտատիրոջ կողմից տրամադրված ապաանձնավորված տեղեկատվության հիման վրա

8.8. Օգտատիրոջը գործող զեղչերի և հատուկ առաջարկների մասին էլ. փոստով կամ հեռախոսով տեղեկացնելու նպատակով

8.9. մարքեթինգային հետազոտությունների անցկացման համար՝ ներառյալ երրորդ կողմերին որպես կապալառու ներգրավմամբ

8.10. գործընկեր բանկերի հետ հաղորդակցություն ապահովելու համար Օգտատիրոջը վարկեր տրամադրելու և (կամ) վարկի պայմանների վերաբերյալ Օգտատիրոջ համաձայնությունը ստանալու համար

9. Ընկերությունը չի ստուգում Օգտատիրոջ տրամադրած տվյալները: Այս առումով Ընկերությունը ելնում է նրանից, որ անձնական տվյալներ ներկայացնելիս Օգտատերը՝

9.1. հանդիսանում է գործունակ անձ: Օգտատիրոջ անգործունակության պարագայում անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է նրԱօրինական ներկայացուցչի կողմից

9.2. նշում է հավաստի տեղեկատվություն իր մասին (կամ իր ներկայացրած անգործունակ անձի վերաբերյալ)

9.3. ինքնուրույն թարմացնում է ներկայացված անձնական տվյալները

9.4. տեղյակ է, որ Օգտատիրոջ կողմից Կայքում տեղադրված տեղեկատվությունը կարող է հասանելի դառնալ այլ անձանց համար և կարող է տարածվել այդ անձանց կողմից` սույն Քաղաքականությամբ նախատեսված դեպքերում:

10. Ընկերությունը անձնական տվյալները մշակում է հետևյալ սկզբունքների հիման վրա`

10.1. օրինականություն;

10.2. անձնական տվյալների մշակման սահմանափակումը կոնկրետ կանխորոշված օրինական նպատակներին հասնելուց հետո

10.3. անձնական տվյալների այնպիսի մշակման կանխումը, որն անհամատեղելի է Օգտատիրոջից կողմից ստացված տվյալների հավաքագրման և (կամ) պահպանման ուղղությամբ Ընկերության նպատակների հետ

10.4. անձնական տվյալների բովանդակության և ծավալի համապատասխանությունը դրանց մշակման նպատակներին

10.5. անձնական տվյալների այնպիսի մշակման կանխումը, որը մշակման նպատակների հետ կապված չափազանցված է

10.6. անձնական տվյալների ճշգրտության, բավարարության և համապատասխանության ապահովում` կապված դրանց մշակման նպատակների հետ.

10.7. անձնական տվյալների ոչնչացում կամ ապանձնավորում Ընկերության կողմից` տվյալների մշակման նպատակներին հասնելուց հետո կամ դրանց ստացման անհրաժեշտության դադարեցումից հետո կամ Օգտատիրոջ կողմից իր անձնական տվյալների մշակման համաձայնության հետ կանչումից հետո

11. Անձնական տվյալները մշակելիս Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ և բավարար կազմակերպչական և տեխնիկական միջոցներ` պաշտպանելու Օգտատիրոջ անձնական տվյալները չարտոնված մուտքից, ինչպես նաև անձնական տվյալների հետ կապված այլ անօրինական գործողություններից:

Օգտատերերի անձնական տվյալների մշակումն իրականացվում է Ընկերության կողմից` հաշվի առնելով ներքոնշյալ կետերը`

11.1. Օգտատերերի անձնական տվյալների մշակումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող տվյալների բազաների միջոցով:

11.2. Անձնական տվյալների մշակումն իրականացվում է ինչպես ավտոմատացված միջոցների կիրառմամբ, այնպես էլ առանց դրանց:

11.3. Ընկերությունը պարտավորվում է Օգտատիրոջից ստացված տեղեկատվությունը չփոխանցել երրորդ անձանց, բացառությամբ սույն Քաղաքականությամբ նախատեսված դեպքերի:

Ընկերության կողմից Օգտատերերի անձնական տվյալների փոխանցումը երրորդ անձանց (գործընկեր կազմակերպություններին) իրականացվում է Օգտատերերի համաձայնության հիման վրա` Ընկերության կողմից վերջիններիս նկատմամբ իր պարտավորությունները կատարելու նպատակով:

11.4. Ընկերությունը և Օգտատերերի անձնական տվյալների փոխանցման անհրաժեշտության դեպքում Ընկերության գործընկեր կազմակերպությունները պարտավորվում են գաղտնի պահել, չհրապարակել կամ չտարածել Օգտատերերի անձնական տվյալները` առանց Օգտատիրոջ համաձայնության, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենքով: և/կամ սույն Քաղաքականությամբ:

11.5. Օգտատերերի անձնական տվյալների պահպանումն իրականացվում է էլեկտրոնային կրիչներով: Օգտատերերի նկատմամբ պարտավորությունների կատարման նպատակով պահպանումը կարող է իրականացվել նյութական կրիչներով` անձնական տվյալների ստացումից հետո:

11.6. Անձնական տվյալների պահպանումն իրականացվում է Օգտատերերի նկատմամբ պարտավորությունները կատարելու համար օբյեկտիվորեն անհրաժեշտ ժամկետով և սահմանվում է հետևյալ դեպքերով` (կախված նրանից, թե որ իրադարձությունն է ավելի վաղ տեղի ունեցել)`

11.6.1. մինչև Օգտատերը չջնջի անձնական տվյալները անձնական հաշվի միջոցով

11.6.2. մինչև Ընկերության կողմից Օգտատիրոջ անձնական տվյալների ոչնչացումը՝ կապված վերջինիս կողմից անձնական տվյալների ոչնչացման խնդրանք ստանալու կամ անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնությունից հրաժարվելու հետ

11.6.3. մինչև Օգտատիրոջ տված համաձայնության ժամկետը լրանալը

11.7. Ընկերությունն իրավունք ունի իր պարտավորությունների կատարումից հետո անանուն եղանակով պահպանել Օգտատիրոջ անձնական տվյալները սույն Քաղաքականության 8,7 կետում նշված նպատակներով, բացառությամբ Օգտատիրոջ կողմից տվյալների ոչնչացման խնդրանք կամ տվյալների մշակման համաձայնությունը հետ կանչելու պահանջներ ստանալու դեպքերի:

12. Եթե սույն Քաղաքականությամբ նախատեսված դեպքերում անհրաժեշտ է Օգտատերերի անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց՝ (Ընկերության գործընկերներին), ապա այդպիսի փոխանցումն իրականացվում է հետևյալ կանոնների պահպանմամբ՝

12.1. Ընկերության գործընկեր երրորդ կողմն ապահովում է Օգտատիրոջ անձնական տվյալների գաղտնիությունը դրանց մշակման և օգտագործման ընթացքում և պարտավորվում է տվյալներ չհրապարակել այլ անձանց, ինչպես նաև չտարածել Օգտատերերի անձնական տվյալներն առանց նրանց համաձայնության.

12.2. Ընկերության գործընկեր երրորդ կողմը երաշխավորում է անվտանգության հետևյալ միջոցառումների պահպանումը Օգտատիրոջ անձնական տվյալների մշակման ընթացքում ՝ տեղեկատվական անվտանգության գործիքների օգտագործում, Օգտատիրոջ անձնական տվյալների կիրառմամբ չարտոնված մուտքի փաստերի հայտնաբերում և գրանցում, անձնական տվյալների վերականգնմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում, անձնական տվյալների մուտքի սահմանափակում, անձնական տվյալների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների, օրենքով նախատեսված այլ միջոցառումների արդյունավետության վերահսկում և գնահատում.

12.3. Ընկերության երրորդ կողմ հանդիսացող գործընկերոջը արգելվում է փոխանցել և տարածել Օգտատերերի անձնական տվյալները:

13. Սույն Քաղաքականությամբ նախատեսված պարտավորությունների խախտում չի համարվում տեղեկատվության փոխանցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմնավորված և կիրառելի պահանջներին համապատասխան; ինչպես նաև Օգտատիրոջ առջև պարտավորությունների կատարման նպատակով Ընկերության կողմից տեղեկատվության տրամադրումը գործընկերներին, ովքեր գործում են ընկերության հետ պայմանագրի հիման վրա; Ընկերության կողմից երրորդ անձանց՝ Օգտատիրոջ չիդենտիֆիկացված տվյալների փոխանցումը Ընկերության կայքի աշխատանքի գնահատականի և վերլուծության նպատակով; ինչպես նաև մարքեթինգային, վերլուծական և վիճակագրական հետազոտությունների անցկացման նպատակով:

14. Ընկերությունն իրավունք ունի օգտագործելու «cookies» տեխնոլոգիան («cookies»):

«Cookies»՝ տվյալներ, որոնք ավտոմատ կերպով փոխանցվում են Ընկերությանը Կայքն օգտագործելու ընթացքում՝ օգտագործելով Օգտատիրոջ սարքում տեղադրված ծրագրային ապահովումը, ներառյալ IP հասցեն, աշխարհագրական դիրքը, տեղեկություններ բրաուզերի և օգտագործողի սարքի օպերացիոն համակարգի տեսակի մասին, տեխնիկական բնութագրերը, տեղեկություններ Օգտատիրոջ կողմից օգտագործվող սարքավորումների և ծրագրային ապահովման, Կայք մուտք գործելու ամսաթվի և ժամի մասին:

«Cookies» ֆայլերը չեն պարունակում գաղտնի տեղեկատվություն: Դրանք օգտագործվում են Օգտատիրոջ նախասիրությունները և կարգավորումները հիշելու, ինչպես նաև Կայք այցելությունների վերաբերյալ վերլուծական տվյալներ հավաքելու համար: Կայքից օգտվելը նշանակում է, որ Օգտատերը համաձայնում է բոլոր «Cookies» ֆայլերի և իր՝ Կայք այցելությունների մասին վերլուծական տվյալների օգտագործման և այլ տվյալները երրորդ անձանց փոխանցելու հետ:

15. Ընկերությունը ստանում է տեղեկատվություն Օգտատիրոջ ip-հասցեի մասին և տեղեկատվություն ինտերնետային այն հղումի մասին, որտեղից նա եկել է Ընկերության Կայք: Այդ տեղեկատվությունը չի օգտագործվում այցելուի անձը հաստատելու համար:

16. Օգտատերն իրավունք ունի Ընկերությունից տեղեկատվություն ստանալ իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ: Ընկերությունն Օգտատիրոջը կամ նրա ներկայացուցչին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Օգտատիրոջն առնչվող անձնական տվյալներին անվճար հիմունքներով:

Տեղեկատվության թերի լինելու կամ դրանում անճշտության հայտնաբերման դեպքում Ընկերությունը, ելնելով Օգտատիրոջ տրամադրած տվյալներից, 7 (յոթ) աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում կատարում է անհրաժեշտ փոփոխություններ Օգտատիրոջ անձնական տվյալների մեջ և ծանուցում Օգտատիրոջը փոփոխությունների մասին:

Եթե Օգտատերը կամ նրա ներկայացուցիչը Ընկերությանը տրամադրում է իր անձնական տվյալների անօրինական ստացման կամ մշակման, ինչպես նաև իր անձնական տվյալների մշակման անհամապատասխանությունը Ընկերության արձանագրած նպատակներին, ապա Ընկերությունը պարտավորվում է 7 (յոթ) աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում ոչնչացնել Օգտատիրոջ անձնական տվյալները և ծանուցել վերջինիս իր ձեռնարկված միջոցների մասին:

17. Ընկերությունը պարտավորվում է դադարեցնել Օգտատիրոջ անձնական տվյալների մշակումը իր կամ իր գործընկեր կազմակերպության կողմից, եթե՝

17.1. հայտնաբերվել է Օգտատիրոջ անձնական տվյալների անօրինական մշակում

17.2. Օգտատիրոջ կողմից չեղարկվել է իր անձնական տվյալների մշակման համաձայնությունը

17.3. Օգտատիրոջից կողմից ստացվել է իր անձնական տվյալների ոչնչացման պահանջ

17.4. Ընկերությունը հասել է իր նպատակներին Օգտատիրոջ անձնական տվյալների մշակմամբ

Վերոնշյալ կետերում շարադրված դեպքերում Ընկերությունը դադարեցնում է Օգտատիրոջ անձնական տվյալների մշակումը և ապահովում դրանց ոչնչացումը 30 (երեսուն) օրը չգերազանցող ժամկետում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

Եթե նշված ժամկետում անհնար է ոչնչացնել Օգտատիրոջ անձնական տվյալները, ապա Ընկերությունն արգելափակում է Օգտատիրոջ անձնական տվյալները և ապահովում դրանց ոչնչացումը օրենքով սահմանված ժամկետում, բայց ոչ ավելի, քան 6 (վեց) ամսվա ընթացքում:

18. Ընկերությունն ինքնուրույն է որոշում երրորդ անձանց՝ Ընկերության գործընկերների ցանկը և այն ներկայացնում է Օգտատերերի դիտարկմանը ցանկացած հնարավոր միջոցներով, այդ թվում՝ Կայքում հրապարակելով:

19. Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություններ կատարել սույն քաղաքականության մեջ: Քաղաքականության ընթացիկ տեքստը տեղադրված է Կայքում:

20. Քաղաքականության նոր տարբերակի հրապարակումից հետո Կայքի կամ նրա ծառայությունների շարունակական օգտագործումը նշանակում է Օգտատիրոջ կողմից Քաղաքականության և դրա պայմանների ընդունում:

Քաղաքականության պայմանների հետ անհամաձայնության դեպքում Օգտագործողը պետք է անհապաղ դադարեցնի Կայքից և դրանում նշված ծառայություններից օգտվելը:

21. Սույն Քաղաքականության և/կամ անձնական տվյալների մշակման վերաբերյալ բոլոր հարցերն ուղղվում են են Ընկերության՝ sales@lerna.team էլեկտրոնային հասցեով:

**Ռեկվիզիտներ**

«ԲՐԵՅՆՍՔԻԼՍ» ՍՊԸ
ՀՎՀՀ 00235569
Իրավաբանական հասցե՝ 0054, ՀՀ, ք.Երևան, Փիրումյաններ 4/3, զրասենյակ 12
Գործունեության (փաստացի) հասցե՝ 0005, ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 80, «Իմփաքթ Հաբ», 2-րդ հարկ

# ПОЛИТИКА ОБРАБОТКИ ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ

1. Политика обработки персональных данных (далее – Политика) регулирует правоотношения по обработке персональных данных между **ООО «BRAINSKILLS»**, ИНН 00235569, юридический адрес: 0054, Республика Армения, г. Ереван, ул. Пирумяннер 4/3, 4-ый этаж, каб. 12 (далее – Компания) и **Пользователем сайта lerna.am** (далее – Пользователь).

Под «Пользователем» понимается дееспособное физическое лицо, достигшее 18-летнего возраста и желающее заказать услуги Компании, оставить комментарий, зарегистрироваться на веб-сайте либо совершить иные действия, предусмотренные функционалом Интернет-ресурса Компании.

Под «Сайтом» или «Интернет-ресурсом Компании» понимается веб-сайт lerna.am с учетом всех уровней доменных имен, принадлежащий Компании.

Под «персональными данными» понимается любая информация, относящаяся к прямо или косвенно определенному или определяемому физическому лицу (гражданину).

Под «обработкой персональных данных» понимается любое действие (операция) или совокупность действий (операций) с персональными данными, совершаемых с использованием средств автоматизации или без использования таких средств. К таким действиям (операциям) можно отнести: сбор, получение, запись, систематизацию, накопление, хранение, уточнение (обновление, изменение), извлечение, использование, передачу (распространение, предоставление, доступ), обезличивание, блокирование, удаление, уничтожение персональных данных.

2. Настоящая Политика определяет порядок обработки персональных данных пользователей сайта lerna.am (далее – Сайт), условия и принципы обработки персональных данных, права Пользователей и обязанности Компании, сведения о реализуемых мерах по защите обрабатываемых персональных данных.

3. Настоящая Политика действует в отношении всех персональных данных, которые Компания получает от Пользователей.

4. Пользователь соглашается с настоящей Политикой путем ввода его имени, номера телефона, а при необходимости – адреса электронной почты (e-mail) в специальное поле на Сайте с предложением отправить запрос на консультацию, записаться, отправить заказ или совершить иные действия, предусмотренные функционалом Сайта, и последующего нажатия кнопки «Отправить», «Запросить консультацию» или других кнопок.

В случае несогласия с условиями Политики Пользователь должен немедленно прекратить любое использование Сайта.

5. При использовании функционала Сайта Пользователь может предоставлять Компании следующие персональные данные (перечень и виды персональных данных зависят от конкретных функциональных возможностей Интернет-ресурса, используемых Пользователем): фамилия, имя, адрес электронной почты, номер контактного телефона, идентификационные данные пользователя (user ID).

6. Предоставляя свои персональные данные, Пользователь соглашается на их обработку (вплоть до отзыва Пользователем своего согласия на обработку персональных данных), включая сбор, хранение, обезличивание, передачу третьим лицам в предусмотренных Политикой случаях, Компанией в целях предоставления Пользователю рекламной, справочной информации, сервисов в соответствии с функциональными возможностями Сайта и в иных целях согласно п.8 настоящей Политики. При обработке персональных данных Компания руководствуется Законом Республики Армения от 13 июня 2015 года № ЗР-49 «О защите персональных данных» с учетом положений Общего регламента по защите данных (General Data Protection Regulation) Европейского

Союза от 27 апреля 2016 года, иными законодательными актами Республики Армения и локальными нормативными правовыми актами.

Предоставленное Пользователем согласие на обработку персональных данных действует со дня предоставления такого согласия до момента достижения целей обработки или отзыва Пользователем согласия, если иное не предусмотрено действующим законодательством.

Пользователь в любое момент может отозвать предоставленное Компании согласие в порядке, установленном настоящей Политикой.

7. Если Пользователь желает уточнить персональные данные в случае, когда персональные данные являются неполными, неточными или неактуальными, либо желает отозвать свое согласие на обработку персональных данных, Пользователь должен направить официальный запрос Компании с темой «Уточнить персональные данные» или «Прекратить обработку персональных данных» на адрес электронной почты sales@lerna.team. В письме необходимо указать свой электронный адрес и соответствующее требование.

8. Компания использует предоставленные Пользователем данные в целях:

8.1. регистрация и идентификация Пользователя на Сайте, предоставление Пользователю возможности полноценного использования Сайта;

8.2. дальнейшей коммуникации по заявке Пользователя, в том числе третьими лицами – партнерами Компании для исполнения обязательств по заявке Пользователя, консультирования по вопросам оказания Компанией услуг;

8.3. создания аккаунта и представления доступа к своей учетной записи/ аккаунта на сайтах- партнерах;

8.4. отправки сообщений информационного характера;

8.5. рекламы, продвижения товаров, работ (услуг), в том числе на основании полученной информации о персональных предпочтениях и настройках Пользователя;

8.6. оценки и анализа работы Сайта Компании;

8.7. аналитики эффективности размещения рекламы, статистических исследований на основе обезличенной информации, предоставленной Пользователем;

8.8. информирования Пользователя об акциях, скидках и специальных предложениях посредством рассылок по электронной почте, телефонной связи;

8.9. проведения маркетинговых исследований, в том числе с привлечением третьих лиц в качестве подрядчика (исполнителя, консультанта);

8.10. ведения коммуникации с банками-партнерами относительно предоставления Пользователю кредитов и/или согласования условий кредитования.

9. Компания не проверяет данные, представленные или указанные Пользователем.

В связи с этим Компания исходит из того, что при представлении персональных данных Пользователь:

9.1. является дееспособным лицом. В случае недееспособности лица, использующего Сайт, согласие на обработку персональных данных предоставляется законным представителем;

9.2. указывает достоверную информацию о себе (либо о представляемом им недееспособном лице);

9.3. самостоятельно поддерживает представленные персональные данные в актуальном состоянии;

9.4. осознает, что информация на Сайте, размещаемая Пользователем, может становиться доступной для других лиц, может быть скопирована или распространена такими пользователями в случаях, предусмотренных Политикой.

10. Компания обрабатывает персональные данные на основе следующих принципов:

10.1. законности;

10.2. ограничения обработки персональных данных достижением конкретных заранее определенных законных целей;

10.3. недопущения обработки персональных данных, несовместимой с целями сбора и/или

хранения полученных от Пользователя данных;

10.4. соответствия содержания и объема обрабатываемых персональных данных целям их обработки;

10.5. недопущения обработки избыточных по отношению к целям обработки данных;

10.6. обеспечение точности, достаточности и актуальности персональных данных по отношению к целям их обработки;

10.7. уничтожение или обезличивание персональных данных в целях недопущения их раскрытия при достижении целей обработки данных, утраты необходимости такой обработки или при получении от Пользователя требования об уничтожении персональных данных либо поступлении заявления об отзыве согласия на обработку персональных данных.

11. Компания при обработке персональных данных принимает необходимые и достаточные организационные и технические меры для защиты персональных данных от неправомерного доступа к ним, а также от иных неправомерных действий в отношении персональных данных.

Обработка персональных данных Пользователей осуществляется Компанией с учетом следующего:

11.1. Обработка персональных данных Пользователей осуществляется с использованием баз данных на территории Республики Армения.

11.2. Обработка персональных данных осуществляется как с использованием автоматизированных средств, так и без их использования.

11.3. Компания обязуется не передавать полученную от Пользователя информацию третьим лицам, кроме случаев, специально оговоренных в настоящей Политике.

Передача персональных данных Пользователей третьим лицам – партнерам Компании при необходимости осуществляется на основании согласия Пользователей в целях исполнения обязательств перед Пользователями.

11.4. Компания, а в случае необходимости передачи персональных данных Пользователей третьим лицам – партнерам Компании эти лица обязуются сохранять в тайне, не раскрывать и не распространять персональные данные без согласия Пользователя, если иное не предусмотрено действующим законодательством и/или настоящей Политикой.

11.5. Хранение персональных данных Пользователей осуществляется на электронных носителях, а для целей исполнения обязательств перед Пользователями может осуществляться на материальных носителях после извлечения персональных данных.

11.6. Хранение персональных данных осуществляется в пределах срока, объективно необходимого для исполнения обязательств перед Пользователями, и определяется следующими событиями (в зависимости от того, какое событие наступит ранее):

11.6.1. до момента удаления Пользователем персональных данных посредством личного кабинета;

11.6.2. до момента уничтожения персональных данных Компанией в связи с поступлением от Пользователя требования об уничтожении персональных данных или отзыве согласия на их обработку;

11.6.3. до момента истечения срока действия согласия Пользователя.

11.7. Компания имеет право хранить персональные данные Пользователя, кроме случаев получения требования об уничтожении данных или отзыва согласия на обработку данных, в обезличенном виде после исполнения обязательств перед Пользователем для целей, указанных в п. 8.7. настоящей Политики.

12. При необходимости передачи персональных данных Пользователей третьим лицам – партнерам Компании в случаях, прямо предусмотренных Политикой, такая передача осуществляется с соблюдением следующих условий:

12.1. третье лицо – партнер Компании обеспечивает конфиденциальность персональных данных при их обработке и использовании и обязуется не раскрывать данные иным лицам, а равно

не распространять персональные данные Пользователей без их согласия;

12.2. третье лицо – партнер Компании гарантирует соблюдение следующих мер по обеспечению безопасности персональных данных при их обработке: использование средств защиты информации; обнаружение и фиксация фактов несанкционированного доступа к персональным данным и принятие мер по восстановлению персональных данных; ограничение доступа к персональным данным; контроль и оценка эффективности применяемых мер по обеспечению безопасности персональных данных, иных мер, предусмотренных законодательством;

12.3. третьему лицу – партнеру Компании запрещается осуществлять передачу и распространение персональных данных Пользователей.

13. Не считается нарушением обязательств, предусмотренных настоящей Политикой, передача информации в соответствии с обоснованными и применимыми требованиями законодательства Республики Армения, а равно предоставление Компанией информации партнерам, действующим на основании договора (соглашения) с Компанией, для исполнения обязательств перед Пользователем; передача Компанией третьим лицам данных о Пользователе в обезличенной форме в целях оценки и анализа работы Сайта Компании, предоставления персональных рекомендаций, показа рекламных объявлений на основании персональных предпочтений и настроек Пользователя, а также проведения маркетинговых, аналитических и/или статистических исследований.

14. Компания вправе использовать технологию «cookies» («куки»). Cookies – данные, которые автоматически передаются Компании в процессе использования Сайта с помощью установленного на устройстве Пользователя программного обеспечения, в том числе IP-адрес, географическое местоположение, информация о браузере и виде операционной системы устройства Пользователя, технические характеристики оборудования и программного обеспечения, используемых Пользователем, дата и время доступа к Сайту.

Файлы «cookies» не содержат конфиденциальную информацию. Файлы «cookies» используются для того, чтобы запоминать предпочтения и настройки Пользователя, а также для сбора аналитических данных о посещениях Сайта. Использование Сайта означает, что Пользователь соглашается с использованием всех файлов «cookies» и аналитических данных о посещениях Сайта, а также на их передачу третьим лицам.

15. Компания получает информацию об ip-адресе Пользователя и сведения о том, по ссылке с какого интернет-сайта он пришел. Данная информация не используется для установления личности посетителя.

16. Пользователь имеет право на получение от Компании информации, касающейся обработки его персональных данных. Компания безвозмездно предоставляет Пользователю или его представителю возможность ознакомления с персональными данными, относящимися к Пользователю.

В случае выявления неполноты, неточности или неактуальности сведений Компания на основании информации Пользователя вносит в персональные данные Пользователя необходимые изменения в срок, не превышающий 7 (семь) рабочих дней, и уведомляет Пользователя о внесенных изменениях.

В случае если Пользователь или его представитель предоставит Компании подтверждение факта незаконного получения или обработки его персональных данных, а равно факта несоответствия действий с его персональными данными целям обработки, Компания в срок, не превышающий 7 (семь) рабочих дней обязуется уничтожить такие персональные данные Пользователя и уведомить Пользователя о предпринятых мерах.

17. Компания обязуется прекратить обработку персональных данных Пользователя или обеспечить прекращение обработки третьим лицом – партнером Компании в случае:

17.1. выявления неправомерной обработки персональных данных Пользователя;

17.2. отзыва Пользователем согласия на обработку его персональных данных;

17.3. получения от Пользователя требования об уничтожении персональных данных;

17.4. достижения цели обработки персональных данных.

При наступлении указанных в настоящем пункте случаев Компания прекращает обработку персональных данных и обеспечивает уничтожение данных в срок, не превышающий 30 (тридцать) дней, если иной срок не установлен законодательством.

При невозможности уничтожения персональных данных Пользователя в указанный срок Компания производит блокировку персональных данных Пользователя и обеспечивает их уничтожение в срок, установленный законодательством, но не более 6 (шести) месяцев.

18. Компания самостоятельно определяет перечень третьих лиц – Партнеров Компании и доводит его до сведения Пользователей любыми доступными способами, в том числе путем публикации на Сайте.

19. Компания вправе вносить изменения в настоящую Политику в любое время. Актуальный текст Политики размещается на Сайте.

20. Продолжение пользования Сайтом или его сервисами после публикации новой редакции Политики означает принятие Политики и ее условий Пользователем.

В случае несогласия с условиями Политики Пользователь должен немедленно прекратить использование Сайта и его сервисов.

21. Все вопросы по настоящей Политике и/или обработке персональных данных направляются на адрес электронной почты Компании: sales@lerna.team.

**Сведения о Компании:**
ООО «BRAINSKILLS»
ИНН 00235569
Юридический адрес: 0054, Республика Армения, г. Ереван, ул. Пирумяннер 4/3, 4-ый этаж, каб. 12
Фактический (почтовый) адрес: 0005, Республика Армения, г. Ереван, просп. Тиграна Меца, 80, Impact Hub Yerevan, 2-ой этаж